



# ԻՐԱԿՈՒՄԵՆՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԾԻՔ

Հիվանդանոցային և արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Սույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24  
Հեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303, Էլ. Փոստ՝ [info@prwb.am](mailto:info@prwb.am), Կայքէջ՝ [www.prwb.am](http://www.prwb.am)



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԾԻՔ

### Հիվանդանոցային և արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

2019թ. փետրվարի 7-ին ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված «Հիվանդանոցային և արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը<sup>1</sup>:

Սույնով ներկայացնում ենք «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ (հետայսու տեքստում՝ կազմակերպություն) կարծիքը և առաջարկությունները ներկայացված նախագծի առնչությամբ:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի (հետայսու տեքստում նաև՝ Օրենք) 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ստացիոնար և ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը հաստատում է ՀՀ կառավարությունը: Չնայած դեռևս 2004 թվականին ընդունված օրենքի գոյությանը՝ կառավարության համապատասխան որոշումը դեռ ընդունված չէ, ինչը պրակտիկայում առաջացնում է ինչպես ընթացակարգային, այնպես էլ բովանդակային մի շարք խնդիրներ՝ վտանգելով դատահոգեբուժական փորձաքննության ենթարկվող անձանց իրավունքները և օրինական շահերը:

Կազմակերպության գործունեության ընթացքում հանդիպել են դեպքեր, երբ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելուց հետո դրանք չեն իրականացվել ողջամիտ ժամկետներում, փորձագիտական եզրակացությունը ներկայացվել է ուշացումներով, չեն պահպանվել փորձաքննվող անձանց իր իրավունքների մասին իրազեկված լինելու և այլ իրավունքները, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ փորձաքննության կազմակերպչական խնդիրների և փորձաքննության իրականացման պայմանների բերումով փորձաքննվող անձինք ենթարկվել են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

<sup>1</sup> Հիվանդանոցային և արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում, նախագիծ, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1499/about> կայքէջում:



# ԻՐԱԿՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՏ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Խնդրահարույց է նաև, որ դատահոգեբուժական փորձաքննությունները չեն իրականացվում ոլորտի միջազգայնորեն ընդունված չափանիշների հիման վրա, ինչպես նաև նախատեսված չեն դատահոգեբուժական փորձաքննություններ իրականացնելու իրավասություն ունեցող փորձագետների մասնագիտական նվազագույն պահանջները:

Այս առնչությամբ, Կազմակերպությունը դրական է գնահատում ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությունը՝ հաստատելու Հայաստանի Հանրապետությունում արտահիվանդանոցային և հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման գործընթացը՝ հաշվի առնելով դատական վարույթներում դատահոգեբուժական փորձաքննությունների կարևորությունը:

Այդուամենայնիվ, ներկայացված նախագծում համապարփակ ձևով արտացոլված չեն ոլորտի խնդիրները և առաջարկվող կարգավորումները թերի ու անհստակ են:

- ***Հիվանդանոցային, այնպես էլ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունների իրականացման չափանիշների բացակայությունը***

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հոգեկան խանգարման ախտորոշումը և բուժումն իրականացվում են միջազգային բժշկական ընդունված չափանիշներին համապատասխան և չեն կարող հիմնվել հասարակության ընդունած բարոյական, մշակութային, քաղաքական կամ կրոնական արժեքների հետ քաղաքացու անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ կապ չունեցող այլ պատճառների վրա:

Նախագծով սահմանվում է միայն, որ «դատահոգեբուժական փորձաքննություն կատարելու ընթացքում չեն կիրառվում փորձաքննության ենթարկվող կամ փորձաքննությանը մասնակցող այլ անձանց կյանքը և առողջությունը վտանգի տակ դնող, մարդկային ինքնասիրությունը ոտնահարող մեթոդներ»:

Ինչպես գործող Օրենքը, այնպես էլ նախագիծը որևէ դրույթ չեն պարունակում դատահոգեբուժական փորձաքննության իրականացման մեթոդների ու չափանիշների, ինչպես նաև մասնագիտական ու էթիկական ուղեկիցների վերաբերյալ, ինչը պրակտիկայում հանգեցնում է մասնագետների կողմից անձի հոգեկան վիճակի կամայական գնահատման և հանգեցնում վտանգավոր հետևանքների: Ավելին, հաշվի առնելով հոգեկան առողջության հնարավոր խնդիրներ ունեցող անձանց խոցելիությունը՝ սա հիմնարար նշանակություն ունի նրանց իրավունքների պաշտպանության համար:

- ***Դատահոգեբուժական փորձաքննություն իրականացնող փորձագետների մասնագիտական որակավորմանը վերաբերող պահանջները***

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հոգեբուժական



# ԻՐԱԿՈՒԹՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

օգնությունը, այդ թվում՝ դատահոգեբուժական փորձաքննությունը, իրականացնում են համապատասխան որակավորում, բարձրագույն բժշկական կրթություն ունեցող բժիշկ-հոգեբույժները:

Նախագիծը սահմանում է, որ դատահոգեբուժական փորձաքննությունը կարող է իրականացվել միայն բժիշկ-հոգեբույժների, իսկ փորձաքննությունն նշանակելու որոշման մեջ նախատեսված լինելու դեպքում՝ նաև այլ բժիշկ-մասնագետներից կազմված փորձագետների հանձնաժողովի կողմից:

Նման կարգավորումը բավարար չէ, քանի որ դատահոգեբուժական փորձաքննություն իրականացնելու համար բժիշկ-հոգեբույժները պետք է տիրապետեն ոչ միայն հոգեբուժություն մասնագիտությանը, այլև պետք է ունենան դատահոգեբուժական փորձաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ **դատական հոգեբույժի մասնագիտական և էթիկական որակավորում**՝ հաշվի առնելով կլինիկական հոգեբույժի և դատական հոգեբույժի կողմից գործունեության և լուծման ենթակա խնդիրների տարբերությունը:

Ավելին, անձի անձնական կյանքի վրա հնարավոր լուրջ հետևանքներ ունեցող դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար ողջամտորեն անհրաժեշտ է սահմանել փորձագետի համար սահմանել մի քանի տարվա մասնագիտական գործունեության փորձի պահանջ: Նման պահանջները էական են՝ հաշվի առնելով նաև դատահոգեբուժական փորձաքննության արժանահավատության ու վստահելիության կարևորությունը:

### ***- Փորձաքննվող անձի իրազեկված լինելու իրավունքը***

Փորձաքննության ենթարկվող անձը ունի մի շարք իրավունքներ և դատավարական երաշխիքներ: Նախագծով սահմանվում է միայն, որ փորձաքննության ենթարկվող անձը պետք է իր համար մատչելի ձևով տեղեկացվի իր նկատմամբ կիրառվող հետազոտությունների մեթոդների վերաբերյալ, ներառյալ այլընտրանքային մեթոդների, և այդ մեթոդների կիրառման հնարավոր հետևանքների մասին, ինչպես նաև փորձաքննվող անձին ու փորձաքննությանը ներկա գտնվող այլ անձանց ներկայացվում է փորձաքննության հանձնաժողովի ամբողջ կազմը:

Նախագծով սահմանվում է նաև, որ «փորձաքննության ենթարկվող անձին, փորձագիտական հիմնարկ նրան հասցնելուն պես նրա համար հասկանալի ձևով փորձագետների հանձնաժողովի նախագահի կողմից պարզաբանվում են տվյալ հաստատություն իր ժամանման նպատակը, որի մասին նշում է կատարվում հիվանդության պատմության մեջ: Եթե քննվողի հոգեկան վիճակն անհնարին է դարձնում այդպիսի պարզաբանումը, ապա այդ մասին ևս նշում է կատարվում հիվանդության պատմության կամ փորձագիտական եզրակացության ակտում»:

Այլ իրավունքների և փորձաքննության հանգամանքների մասին փորձաքննության ենթարկվող անձին կամ փորձաքննությանը ներկա գտնվող նրա ներկայացուցչին տեղեկացնելու պարտականության մասին նախագիծը չի սահմանում:

Մինչդեռ, փորձաքննության ենթարկվող անձի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև փորձաքննության իրականացման էթիկական նկատումներից ելնելով՝ հանձնաժողովի

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24

Ֆեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303, Էլ. Փոստ՝ [info@prwb.am](mailto:info@prwb.am), Կայքէջ՝ [www.prwb.am](http://www.prwb.am)



# ԻՐԱԿՈՒԹՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ներկայացուցիչները պարտավոր են փորձաքննվող անձին տեղեկացնել փորձաքննության ընթացքում և դրա առնչությամբ իր դատավարական իրավունքներին, այդ թվում՝ իր ցանկությամբ փորձաքննության ենթարկվելու ներկայացուցչի (այդ թվում՝ օրինական ներկայացուցչի) ներկայությամբ, փորձագետներից յուրաքանչյուրին և ամբողջ հանձնաժողովին բացարկ հայտնելու իրավունքի մասին, փորձաքննության նպատակի, փորձաքննության ընթացքում կոնֆիդենցիալության առանձնահատկություններին, անձի տեղեկացված համաձայնության կարևորության և այլ հանգամանքների մասին:

Միաժամանակ, ի լրումն փորձաքննվող անձին իրեն մատչելի ձևով վերոգրյալ տեղեկատվության տրամադրման՝ անհրաժեշտ է փորձաքննվող անձին իր իրավունքների մասին տեղեկացնել գրավոր ձևով՝ հաստատելով դա նրա կամ ներկայացուցչի ստորագրությամբ:

### ***- Փորձագիտական եզրակացության երրորդ օրինակը ստանալու իրավունքը***

Դատահոգեբուժական փորձաքննության ընդհանուր պայմանները բաժնում ներկայացվում է, որ դատահոգեբուժական փորձաքննությունը, ինչպես նաև հատուկ կարծիք պարունակող եզրակացությունը, կազմում են երեքական օրինակից, որոնցից (...) երրորդ օրինակը տրամադրվում է կամ ուղարկվում է դատահոգեբուժական փորձաքննության ենթարկված անձին կամ նրա օրինական ներկայացուցչին:

Հաշվի առնելով հոգեբուժական փորձաքննության ենթարկված անձի իրավական պաշտպանության կարևորությունը, անհրաժեշտ է նախագծով սահմանել նաև փորձաքննության եզրակացության երրորդ օրինակի տրամադրման կամ ուղարկման հնարավորություն փորձաքննվողի ոչ միայն օրինական ներկայացուցչին, այլ նրա շահերը դատավարության ընթացքում պաշտպանող ներկայացուցչին (փաստաբանին)՝ հաշվի առնելով փորձաքննվող անձի և օրինական ներկայացուցչի միջև պրակտիկայում հաճախ հանդիպող դեպքերը ( փորձաքննվող անձի կոնֆլիկտային հարաբերությունների առկայության դեպքերը):

### ***- Փորձագիտական հանձնաժողովի կազմը բարդ դեպքերում***

Նախագծով սահմանվում է, որ «հիվանդանոցային և արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացնող փորձագետների հանձնաժողովը պետք է բաղկացած լինի առնվազն երեք հոգեբույժներից: Բարդ դեպքերում փորձաքննության կատարումը կարող է հանձնարարվել ավելի մեծ թվով անդամներից բաղկացած հանձնաժողովի:

Նախագիծը չի սահմանում, թե որ օբյեկտիվ հանգամանքների հիման վրա դեպքը կարող է որակվել բարդ, ով (պաշտոնատար անձ, փորձագիտական հիմնարկ, թե փորձագիտական հանձնաժողովը) է օժտված դեպքի որակման և գնահատական տալու իրավասությամբ:

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24

Ֆեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303, Էլ. Փոստ՝ [info@prwb.am](mailto:info@prwb.am), Կայքէջ՝ [www.prwb.am](http://www.prwb.am)



# ԻՐԱԿՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

### - Փորձաքննությունների իրականացման ժամկետները

Նախագծով սահմանվում է, որ «Հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունը իրականացվում է մինչև 24-օրյա ժամկետում, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է մինչև 15-օրյա ժամկետում»:

Միաժամանակ, հստակ չէ նշված ժամկետների հաշվարկման մեկնարկի պահը, ինչը պրակտիկայում հանգեցնելու է դրանց տարամեկնաբանությունների:

Ավելին, 24-օրյա ժամկետի սահմանումն անհստակ է նաև այն առնչությամբ, թե արդյո՞ք հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության ենթարկվող անձը պետք է 24 օր պահվի հիվանդանոցային ստացիոնարում, ինչպես դա իրականացվում է այժմ պրակտիկայում, թե՞ կոնկրետ անձի դեպքում կարող են նախատեսվել այլ ժամկետներ:

Անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից էական է սահմանել այն առավելագույն ժամկետը, որի ընթացքում փորձաքննվող անձը կարող է **պահվել հիվանդանոցային պայմաններում**:

Ավելին, նշված ժամկետներն անհստակ են նաև այն առնչությամբ, որ հասկանալի չէ, թե համապատասխանաբար հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար սահմանված 24 օրյա և արտահիվանդանոցային փորձաքննության համար նախատեսված 15 օրյա ժամկետներն արդյո՞ք ընդհանուր ժամկետներ են, քանի որ մեկ այլ դրույթով սահմանվում է, որ «բոլոր դեպքերում հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության **ընդհանուր ժամկետը** չի կարող գերազանցել 45 օրը, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության ժամկետը՝ 25 օրը» և արդյո՞ք փորձաքննության եզրակացության տրման 5-օրյա ժամկետը հաշվվում է ընդհանուր ժամկետի մեջ, թե ոչ:

**Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.**

1. Մշակել և սահմանել դատահոգեբուժական փորձաքննության իրականացման մեթոդների և դատական հոգեբույժների մասնագիտական էթիկայի չափանիշները:
2. Սահմանել դատահոգեբուժական փորձաքննություն իրականացնելու համար փորձագետներին ուղղված դատական հոգեբույժի մասնագիտական որակավորման և մասնագիտական գործունեության փորձի պահանջներ:
3. Սահմանել փորձաքննվող անձին իրեն մատչելի ձևով՝ փորձաքննության ենթարկելու ընթացքում իր իրավունքների և այլ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման՝ հանձնաժողովի պարտականությունը, այդ թվում՝ գրավոր ձևով:

Հայաստան, 0002, ք. Երևան, Ամիրյան 11, բնակարան 24

Ֆեռ. +374(10) 505 303 Բջջ. +374(98) 505 303, Էլ. Փոստ՝ info@prwb.am, Կայքէջ՝ [www.prwb.am](http://www.prwb.am)



# ԻՐԱԿՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ

## ՅԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

4. Նախատեսել փորձագիտական եզրակացության երրորդ օրինակը նրա ներկայացուցչին տրամադրելու հնարավորությունը:
5. Մահմանել նախագծով նախատեսված բարդ դեպքերի գնահատմանն որակման չափանիշներն ու այդ իրավասությունն ունեցող անձին:
6. Հստակեցնել դատահոգեբուժական փորձաքննության իրականացման ժամկետները, դրանց հաշվարկման մեկնարկը:
7. Մահմանել այն առավելագույն ժամկետը, որի ընթացքում փորձաքննվող անձը կարող է պահվել հիվանդանոցային պայմաններում (ստացիոնարում):